# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Սարահարթ համայնք
հեռ 094 077616
Էլ.Փոստ՝ sarahart.lori@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ու Մ**

« 01 » հուլիսի 2015 թվականի N 07

ՍԱՐԱՀԱՐԹ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ,ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ և 72-րդ հոդվածներով՝ Սարահարթ գյուղական համայնքի ավագանին՝

Որոշում է.

1. Հաստատել Սարահարթ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը,գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը /համաձայն հավելվածի/:
2. Սարահարթ գյուղական համայնքի ղեկավարին՝ գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացուցակում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին մեկշաբաթյա ժամկետում սահմանված կարգով դիմել ՀՀ տարածքային կառավարման նախարարին:
3. Ուժը կորցրած ճանաչել Սարահարթ համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 15-ի Սարահարթ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը,գյուղապետարանի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին թիվ 20 որոշումը:
4. Սույն որոշման 1-ին և 3-րդ կետերը ուժի մեջ են մտնում Սարահարթի գյուղապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անվանացուցակում համապատասխան փափոխություններ կատարելու մասին իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Սուքիասյան Սեյրան | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |

**Սարահարթ համայնքի ղեկավար** __________ Վասիլ Փիլոյան

Հավելված
Սարահարթ գյուղական համայնքի
ավագանու 01. 07. 2015թ. N 07
որոշման

# Սարահարթ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը , աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը 10 (տաս)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորների թիվը | Պաշտոնային դրույքաչափերը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 260.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 117.0 |
| 3 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 120.0 |
| 4 | Համայնքի ղեկավարի աշխատակաղմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 115.0 |
| 5 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 115.0 |
| 6 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 113.0 |
| 7 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 87.0 |
| | ՏԵՂԱՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| | Վարորդ | 1 | 73.0 |
| | Գործավար | 1 | 86.0 |
| | Հավաքարար | 1 | 100.0 |
| | Ընդամենը | 10 | 1186,0 |

Սարահարթ համայնքի ղեկավար՝ / Վ. Փիլոյան /

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարահարթ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, գ. Սարահարթ, Հեռ. (094)077616 ,

01 . հուլիս . 2015թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

<< 01 >> հուլիս 2015 թվականի N 08

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, համայնքի ավագանու 2014 թվականի նոյեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Սարահարթ համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին>> թիվ 13 Ա որոշմամբ հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Սարահարթ համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացրած գումարները:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Հավելված

ՀՀ Լոռու մարզի

Սարահարթ համայնքի ավագանու

2015 թվականի հուլիսի 01-ի N 08 որոշման

# Ց Ու Ց Ա Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

| | |
|---|---|
| 1. Ֆիդանյան Արամայիս Սարիբեկի | 30 000 հազար դրամ |
| 2. Համբարյան Իրինա Հայկազի | 50 000 հազար դրամ |
| 3. Ֆիդանյան Հայկուհի Մեյրանի | 50 000 հազար դրամ |
| 4. Սիմոնյան Հայկ Հմայակի | 50 000 հազար դրամ |
| 5. Մանուկյան Գայանե Միշայի | 50 000 հազար դրամ |
| 6. Կասեմյան Հայկ Ռոբերտի | 20 000 հազար դրամ |
| 7. Բարիկյան Նունե Ռուբենի | 20 000 հազար դրամ |
| 8. Խումարյան Զավեն Արթուրի | 20 000 հազար դրամ |

ԸՆԴԱՄԵՆԸ՝ 290 000 հազար դրամ:

Սարահարթ համայնքի ղեկավար Վ.Փիլոյան

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Սահակյան Լյովա | | | |
| Մանուկյան Նազար | | | |
| Սուքիասյան Սեյրան | | | |
| Քոթանջյան Վազգեն | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՍԻԼ ՓԻԼՈՅԱՆ

Կատ. '

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

**Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի**
**Սարահարթ համայնք**

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<< 01>> հուլիսի 2015 թվականի N 09

### ՍԱՐԱՀԱՐԹ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 01-Ի ԹԻՎ 5 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 70-րդ հոդվածով՝ Սարահարթ համայնքի ավագանի որոշում է.

1. Սարահարթ համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 01 -ի << ՀՀ Լոռու մարզի Սարահարթ համայնքի գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների նվազագույն աշխատավարձի չափի մասին >> թիվ 5 -Ա որոշման 1-ին կետում <<70822>> թիվը փոխարինել <<77910>> թվով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հուլիսի 1-ից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Մանուկյան Նազար | | | |
| Սահակյան Լյովա | | | |
| Սուքիասյան Սեյրան | | | |
| Քոթանչյան Վազգեն | | | |

**Սարահարթ համայնքի ղեկավար** ____________ **Վասիլ Փիլոյան**

Հավելված
Սարահարթ գյուղական համայնքի
ավագանու 01. 07. 2015թ. N 09
որոշման

# Սարահարթ գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը , աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը,հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

1. Աշխատակիցների թվաքանակը 10 (տաս)
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորների թիվը | Պաշտոնային դրույքաչափերը (հազար դրամ) |
|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 260.0 |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 117.0 |
| 3 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար | 1 | 120.0 |
| 4 | Համայնքի ղեկավարի աշխատակաղմի առաջատար մասնագետ-հաշվապահ | 1 | 115.0 |
| 5 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ | 1 | 115.0 |
| 6 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 1 | 113.0 |
| 7 | Համայնքի ղեկավարի աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 87.0 |
| | ՏԵՂՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՆՁՆԱԿԱԶՄ | | |
| | Վարորդ | 1 | 73.0 |
| | Գործավար | 1 | 86.0 |
| | Հավաքարար | 1 | 100.0 |
| | Ընդամենը | 10 | 1186,0 |

Սարահարթ համայնքի ղեկավար՝ / Վ. Փիլոյան /